*Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
ՆԱԽԱԳԾԻ (Պ-575-17.04.2020-ՊԻ-011/0)

ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԳՐԱՎՈՐ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

| | ԱՌԱՋԱՐԿԻ ՀԵՂԻՆԱԿԸ | ՆԱԽԱԳԾԻ ԱՅՆ ՄԱՍԸ, ՈՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՒՄ Է ԱՌԱՋԱՐԿԸ | ԱՌԱՋԱՐԿԸ | ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԻՄՆԱԿԱՆ ԶԵԿՈՒՑՈՂԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ Ը | *ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ* |
|---|---|---|---|---|---|
| ***1.*** | Կառավարություն, հեղինակներ | Նախագծի 1-ին հոդված | Նախագծի 1-ին հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ. «1. Վերնագիրը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ. «Փաստաբանի կամ նոտարի գործունեության իրականացմանը խոչընդոտելը կամ, կապված նրա | Ընդունվել է | Ընդունվել է |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | գործունեության իրականացման հետ, սպառնալը»<br><br>2. 1-ին մասից հանել «Պաշտոնատար անձի կողմից» բառերը,<br><br>3. 1-ին և 2-րդ մասերում «լիազորությունների» բառը փոխարինել «գործունեության» բառով,<br><br>4. լրացնել նոր 3-րդ մասով.<br><br>«3. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված արարքները, որոնք կատարվել է պաշտոնեական դիրքն օգտագործելով՝<br><br>պատժվում են տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկից յոթհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երկու տարի ժամկետով կամ առանց դրա:»:<br>(Տե՛ս Տեղեկանքում): | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| *2.* | Կառավարություն, հեղինակներ | Նախագծի 2-րդ հոդված | Նախագծի 2-րդ հոդվածում «օրվանից» բառը փոխարինել «օրը» բառով: | Ընդունվել է | Ընդունվել է |